



**ՄՏԵՂԾԻՐ ԱՆԵԼԱՆԵԼԻ ՎԻՃԱԿ: «ՄԱՀՎԱՆ ԳՈՏԻՆԵՐԻ»
ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
(Զորքորդ ռազմավարություն)**

Դուք ձեր ամենավատ թշնամին եք: Դուք վատնում եք թանկարժեք ժամանակը՝ երազելով ապագայի մասին՝ ներկայի վրա կենտրոնանալու փոխարեն: Այսօր ձեզ ոչինչ անհապաղ չի թվում, և այդպիսով դուք տրվում եք գործի միայն կեսին, բոցավառվելու փոխարեն մարմրում եք: Միակ բանը, որը կօգնի ձեզ փոխվել, իրական գործն է և արտաքին ճնշումը: Դատարկ տեղը ժամանակ կամ ռեսուրսներ վատնելու փոխարեն ինքներդ ստեղծեք իրավիճակներ, որտեղ խաղասեղանին դրված կլինի չափազանց շատ բան: Եթե չեք կարող ձեզ թույլ տալ կորցնել, դուք չեք կորցնի: Խզեք կապերը անցյալի հետ, մտեք անհայտ աշխարհ, որտեղ դուք պետք է ապավինեք միայն ձեր խելքին և էներգիային, որպեսզի հասնեք ավարտին: Ինքներդ ձեզ ուղարկեք «մահվան գոտի», որտեղ մեջքով պատին հպած, ստիպված կլինեք առյուծի պես կռվել կենդանի մնալու համար:

«ՀԵՏԴԱՐՁԻ ՃԱՆԱՊԱՐՀ ՉԿԱ» ՄԱՐՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

1504 թվականին տասնինը տարեկան հավակնոտ իսպանացի Էրնան Կորտեսը, թողնելով համալսարանական ուսուցումը, որտեղ նա հետազոտում էր իրավագիտություն, մեկնեց Նոր աշխարհ՝ իր հայրենիքի գաղութներից մեկը: Սկզբում ավի իջնելով Սանտա Դոմինգո կղզում, այնուհետև տեղափոխվեց Կուբա: Նա բազմիցս լսել էր պատմություններ արևմուտքում գտնվող հողերի մասին, որը կոչվում էր Մեքսիկա՝ հզոր մի կայսրություն, որտեղ ոսկին առատ էր: Ացտեկները ղեկավարում էին Մեքսիկան, իսկ նրա մայրաքաղաքը՝ հոյակապ, հարուստ Տենոչտիտլան քաղաքը, գտնվում էր բարձր լեռներում: Այդ ժամանակից ի վեր մի միտք տիրեց Կորտեսին. կգա մի օր, երբ նա կնվաճի այս կայսրությունը և կդարձնի այն գաղութ:

Տասը տարիների ընթացքում Կորտեսը աստիճանաբար բարձրացավ պաշտոնավարման սանդուղքով՝ սկզբում որպես Կուբայի իսպանացի նահանգապետի քարտուղար, իսկ հետո՝ թագավորական գանձապահ: Իրականում, նա պարզապես սպասում էր իր ժամին, մինչդեռ Իսպանիան ջոկատը ջոկատի ետևից ուղարկում էր Մեքսիկա, բայց նրանք գրեթե հետ չէին վերադառնում:

Եվ վերջապես, 1518 թվականին Կուբայի նահանգապետ Դիեգո դե Վելասկեսը հանձնարարեց Էրնան Կորտեսին ղեկավարել էքսպեդիցիան: Նա պետք է պարզեր ավելի վաղ Մեքսիկա մեկնածների ճակատագիրը, գտներ ոսկին ու նախապատրաստական աշխատանքներ կատարեր՝ հիմք դնելով կայսրության նվաճմանը: Բայց Վելասկեսի պլանները շատ ավելի ընդարձակ էին: Նա մտադրված էր անձամբ Մեքսիկան նվաճելու, իսկ տեղագնական էքսպեդիցիայի համար նրան պետք էր կառավարելի մարդ, ով կարող էր վերահսկվել: Սակայն Վելասկեսի մոտ շուտով սկսեց կասկածներ առաջանալ Կորտեսի բնավորության առնչությամբ: Կորտեսը խելացի էր, գուցե նույնիսկ ավելին, քան պահանջվում էր:

Կորտեսին լուրեր հասան, որ նահանգապետը տատանվում է և ցանկանում է չեղարկել նրան Մեքսիկա ուղարկելու իր որոշումը: Որոշելով, որ պետք է շտապել, նա կարողացավ նույն գիշերը տասնմեկ նավերով ճողպարել Կուբայից՝ որոշելով ավելի ուշ բացատրություն տալ նահանգապետին:

1519 թվականի մարտին էքսպեդիցիան ավի իջավ Մեքսիկայի արևելյան ափին: Մի քանի ամսվա ընթացքում Կորտեսն իրականացրեց իր ծրագրերը՝ հիմնադրեց Վերակրուս քաղաքը, դաշինք կնքեց ացտեկների դեմ թշնամաբար տրամադրված տեղական ցեղերի հետ, այնուհետև հանդիպեց ացտեկների կայսրին, որի մայրաքաղաքը գտնվում էր մոտ 250 մղոն դեպի արևմուտք: Բայց մի միտք կոնկիստադորին հանգիստ չէր տալիս: Կուբայից նրա հետ նավարկած հինգ հարյուր զինվորների մեջ, անշուշտ, կային Վելասկեսի լրտեսները, ովքեր կարող էին լուրջ վնաս հասցնել, եթե Կորտեսը որոշեր չարաշահել լիազորությունները: Վելասկեսի այս հավատարիմ հպատակները արդեն մեղադրել էին Կորտեսին նահանգապետի պահած ոսկու սխալ գործածության մեջ, երբ Վելասկեսը պատրաստվում էր նվաճել Մեքսիկան: Լրտեսները լուրեր էին տարածում, որ կոնկիստադորը խելքը գցել է: Թեև, դժվար չէր դրան հավատալ, քանի որ նա պատրաստվում էր հինգ հարյուր ողորմելի զինվորներով արշավել կես միլիոնանոց ացտեկների բանակի դեմ՝ կատաղի և անողորմ ռազմիկների դեմ, որոնց մասին պատմում էին, որ նրանք ուտում էին գերված թշնամիներին և որպես զարդարանք կրում էին նրանցից հանված մաշկը: Խելամիտ մարդը ոսկով կվերադառնար Կուբա, որպեսզի այնտեղ ավելի ուժեղ բանակ հավաքեր: Նրանք արդեն շատ երկար են մնացել այս անհյուրընկալ երկրում, և

թշնամին ուներ հսկայական թվային առավելություն: Ո՛չ, ժամանակն է, որ նրանք վերջապես վերադառնան տուն՝ Կուբա, իրենց կանանց և երեխաների մոտ, որտեղ նրանց հարմարավետ կյանք էր սպասվում:

Խառնակիչներին հնարավորինս անվտանգ դարձնելու համար Կորտեսը փորձում էր ոմանց կաշառել, իսկ մյուսներին պահել խիստ հսկողության տակ: Միննույն ժամանակ, խռովարարների վնասակար գործունեությունը չեզոքացնելու նպատակով, նա փորձում էր նաև փոխհամագործակցել մնացած զինվորների հետ: Թվում էր, թե ամեն ինչ լավ է ընթանում մինչև հուլիսի 30-ի գիշերը, երբ իսպանացի նավաստին, արթնացնելով Կորտեսին, մեղայականով խոստովանեց, որ ինքը ներգրավված է նավը գրավելու և տուն վերադառնալու դավադրության մեջ, և որ Վելասկեսին պետք է զեկուցի, որ Կորտեսը պատրաստվում է գրավել Մեքսիկան:

Կորտեսը հասկացավ, որ եկել է վճռական պահը: Նա կարող էր հեշտությամբ ճնշել դավադրությունը, բայց մեկին կհաջորդեին մյուսները: Նրա մարդիկ բռնի զինվորականներ էին, հրոսակախմբեր, ովքեր տարված էր միայն ոսկու, Կուբայի և ընտանիքների մասին մտքերով: Նրանք թքած ունեյին ացտեկների վրա, ուստի այսպիսի թիմով՝ անմիաբան, անվստահելի, իմաստ չկար նույնիսկ մտածել կայսրությունը նվաճելու մասին:

Ինչպե՞ս հավատ ներշնչել նրանց, ինչպե՞ս էներգիա հաղորդել նրանց, ինչպե՞ս կենտրոնանալ ամենադժվար առաջադրանքի կատարման վրա: Մանրակրկիտ խորհելուց հետո նա որոշեց, որ պետք է արագ գործել: Նա ձերբակալեց երկու խառնակիչների և հրամայեց կախաղան հանել: Դրանից հետո շատ առատաձեռն վարձատրության դիմաց համոզեց նավաստիներին անցքեր շաղափել բոլոր նավակողերին և բոլորին հայտարարել, որ փայտը որդերն են կերել, և, որ նավերը կարող են խորտակվել:

Ձևացնելով, որ լուրը նրան հուսահատեցրել է, Կորտեսը հրամայեց նավերից ցամաք բեռնաթափել բոլոր քիչ թե շատ արժեքավոր ունեցվածքը, որից հետո նավերը պետք է խորտակվեին: Նավաստիները համաձայնեցին, բայց շաղափված անցքերը բավարար չէին, ուստի միայն հինգ նավ ջրասույզ եղավ: Որդերի մասին պատմությունը բավական խելամիտ էր, և զինվորները հանգիստ ընդունեցին կորցրած հինգ նավերի լուրը: Բայց երբ մի քանի օր անց ավելի շատ նավեր խորտակվեցին՝ ջրի երեսին թողնելով միայն մեկը, պարզ դարձավ, որ այդ ամենի հետևում կանգնած է Կորտեսը: Եվ, երբ նա հրամայեց բոլորին հավաքվել, զինվորները վրեժի ծարավ էին:

Այս անգամ հնարքներնր բանեցնելու և խուսանավելու համար ժամանակ չկար: Կորտեսը դիմեց զինվորներին: Այո, նա էր, հրամայել խորտակել նավերը, բայց, ինչ էլ որ լինի, միննույն է, դրանք հետ չեն բերվի: Այժմ նա գտնվում է նավաստիների ձեռքում: Նրանք, իհարկե, կարող են սպանել իրեն, բայց միննույն ժամանակ կմնան միայնակ՝ շրջապատված ռազմատենչ ացտեկներով, առանց նավերի: Միակ ելքը նրա հետ Տենոչտիտլան արշավի գնալն է: Միայն ացտեկներին ստրկացնելով և Մեքսիկան նվաճելով՝ նրանք կկարողանան կենդանի վերադառնալ Կուբա:

Տենոչտիտլային հասնելու համար զինվորները ստիպված էին անխոնջ պայքարելու: Նրանք պետք է միավորվեին՝ ցանկացած տարաձայնություն կհանգեցներ պարտության և մահվան: Իրավիճակը հուսահատ էր թվում, բայց եթե մարտիկները համաձայնեն կենաց-մահու կովել, նա՝ Կորտեսը, երաշխավորեց, որ նրանց կտանի մեծ հաղթանակի: Եվ նույնիսկ, եթե նրա բանակը փոքրաթիվ է, այնքան մեծ կլինի փառքն ու հարստությունը, որը նրանք կշահեն: Վախկոտները, ովքեր չեն համար-

ձակվում պատասխանել այս մարտահրավերին, կարող էին մեկնել Կուբա միակ մնացած նավով:

Վերջին առաջարկը ոչ ոք չընդունեց, և մնացած միակ նավը ջրասույզ արվեց: Կորտեսը բանակը շարժեց մայրցամաքի խորքը: Նրա հիմնական ուշադրությունը կենտրոնացած էր ացտեկների կայսրության սիրտի՝ Տենոչտիտլանի վրա: Իսկ ի՞նչ վիճակում էին նրա զինվորները: Տրտունջն ու դժգոհությունները մաքեց, իսկ անձնական շահն ու ազահությունը վերացավ: Հասկանալով, թե որքան վտանգավոր է իրավիճակը, կոնկիստադորները կռվում էին առանց իրենց խնայելու: Իսպանական նավերի խորտակումից երկու տարի անց Կորտեսի բանակը, տեղացի դաշնակիցների աջակցությամբ, պաշարեց Տենոչտիտլանը և ացտեկներին կայսրությունը ընկավ:

Մեկնաբանում

Դավադրության գիշերը Կորտեսը պետք է արագ որոշում կայացներ: Ո՞րն էր նրա առջև ծառացած խնդրի էությունը: Չարի արմատը ոչ Վելասկեսի լրտեսների, ոչ ռազմատենչ ացտեկների, ոչ էլ նրանց քանակական գերազանցության մեջ էր: Կորտեսի համար գլխավոր խնդիրը յուրային զինվորներն էին և նավահանգստում գտնվող նավերը: Զինվորները կտոր-կտոր էին լինում պարտքի զգացողության և կարոտի միջև: Նրանք անընդհատ մտածում էին իրենց կանանց, ոսկու մասին և ապագայի պլաններ էին կառուցում: Նրանք անհամբեր սպասում էին տուն վերադառնալուն և հոգու խորքում երագում էին Կորտեսի պլանները խափանելու մասին: Եթե արշավը ձախողվեր, կարող էին մեկնել Կուբա: Խարսխված նավերը նրանց համար ոչ միայն պարզագույն տրանսպորտ էր, այլ ավելին՝ նավերը խորհրդանշում էին Կուբան, ազատությունը, լրացուցիչ ուժեր ստանալու համար հնարավորությունը և շատ տարբեր այլ հնարավորություններ:

Այսպիսով, զինվորների համար նավերը փրկության պես մի բան էին՝ հենարան, ելք, եթե ամեն ինչ վատ ընթանար: Երբ Կորտեսը հասկացավ դա, նա մի պարզ որոշում կայացրեց՝ նավերը պետք է խորտակվեին:

Անհույս դրության մեջ դնելով յուրայիններին՝ նա երաշխավորեց, որ նրանք կռվեն ամբողջ նվիրումով:

Հրատապության զգացումը անքակտելիորեն կապված էր իրականության հետ: Փոխանակ անձնատուր լինելու հնարավոր փրկության երազանքներին կամ ապագայում ավելի լավ կյանքի հույսերին, զինվորները ստիպված էին առերեսվել ներկայի հետ և դիմակայել իրական վտանգին: Դժվարությունների առաջ ընկրկելով՝ նրանք կմեռնեին: Միգուցե մարդիկ, ովքեր ամբողջովին նվիրվում են ներկա պահի խնդիրների լուծմանը, վախեցնում են մեզ: Այնուամենայնիվ, այդքան լիարժեք կենտրոնանալու ունակության շնորհիվ նրանք ավելի ուժեղ և հզոր են թվում, քան իրականում են: Համառությունը նրանց լրացուցիչ ուժ և էներգիա է հաղորդում: Այսպիսով, հինգ հարյուր հոգանոց ջոկատի փոխարեն, Կորտեսը անսպասելիորեն զգաց հզոր բանակի աջակցությունը:

Ինչպես Կորտեսը, դուք պետք է հասնեք ձեր պրոբլեմների բուն պատճառին: Դա ոչ թե քո միջավայրում է, այլ քո մեջ է և այն տրամադրության մեջ, որով նայում ես աշխարհին: Հոգու խորքում դուք սովոր եք փախուստի երթուղիներ պլանավորել, սողանցքներ փնտրել, ապահովագրվել, եթե ամեն ինչ լավ չի ընթանում: Մրանք կարող են լինել հարուստ հարազատները, որոնց օգնությանը կարող եք դիմել ձախողման դեպքում, կամ շահավետ առաջարկը՝ ինչ-որ տեղ հեռավոր ապագայում,

անվերջ հեռանկարում, որը կարծես բացվում է ձեր առջև, կամ ծանոթ աշխատանքը, կամ հարմարավետ հարաբերությունները, որոնք միշտ կարող են ծառայել ձեզ, եթե ինչ-որ բան չի ստացվում: Այս բոլոր բացերը ոչ այլ ինչ են, քան նավեր, որոնց Կորսեսի զինվորները հույսով էին նայում: Դուք դրանք տեսնում եք որպես օրհնություն, բայց իրականում դրանք աղետ են: Նրանք կտոր-կտոր են անում ձեզ, խլում են ձեր ամբողջականությունը: Դուք զգում եք, որ ունեք ընտրության հնարավորություն, և այս պատրանքի պատճառով չեք կարողանում ամբողջությամբ և լիարժեք տրվել առաջադրանքին և կատարել այն ճիշտ: Մա է միակ պատճառը, որ դուք չեք կարողանում հասնել լիակատար հաջողության և հասնել ձեր ուզածին: Երբեմն դուք պետք է ոչնչացնեք և խորտակեք նավերը՝ թողնելով ձեզ միայն մեկ ընտրություն՝ հաղթել կամ մեռնել: Նավերի ոչնչացումը պետք է լինի ոչ թե պայմանական, այլ հնարավորինս իրական՝ ազատվեք ապահովագրական ցանցից: Երբեմն ինչ-որ բանի հասնելու համար հարկավոր է, որպեսզի ինքներդ ձեզ անելանելի դրության մեջ դնեք:

«ՄԱՀԸ ԿՐՆԿԱԿՈՒՆ ՀԵՏԵՎՈՒՄ Է» ՄԱՐՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Մեզ համար հեշտ չէ պատկերացնել մահը: Այն չափազանց մեծ է, չափազանց վախեցնող, և մենք ամբողջ ուժով փորձում ենք խուսափել նույնիսկ դրա մասին մտածելուց: Մեր հասարակությունը կազմակերպված է մահը թաքցնելու, այն անտեսանելի դարձնելու, հեռավորության վրա պահելու համար: Այս հեռավորությունը անհրաժեշտ է մեր մտքի խաղաղության համար, բայց այն ձեռք է բերվում սարսափելի գնով՝ անսահմանափակ ժամանակի պատրանքով և դրա հետևանքով առօրյա կյանքին լուրջ վերաբերվելու լիակատար անկարողությամբ: Մենք փախչում ենք իրականությունից, միակ իրականությունից, որը սպասում է մեզ բոլորիս:

Դուք կյանքում մարտիկ եք և պետք է փոխեք այս իրավիճակը: Մահվան միտքը պետք է ոչ թե ինքներդ ձեզանից վանեք, այլ գրկաբաց դիմավորեք: Ձեր օրերը հաշված են: Քա ըջ կտաք այն անգործությամբ ու անտարբերությամբ, թե՛ կապրեք լիակատար նվիրումով: Դաժան ներկայացումները, որոնք երբեմն կազմակերպվում են հուզմունքների սիրահարների կողմից, ոչ մեկին պետք չեն: Մահը կայցելի ձեզ առանց այդ էլ: Պատկերացրեք, որ նա արդեն մոտ է, որ դուք չեք կարող փախչել, քանի որ իսկապես չեք կարող փախչել նրանից: Այն զգացողությունը, որ մահը կրնակակոխ հետևում է, վստահություն կհաղորդի ձեզ, գործողությունները կդարձնի ավելի իմաստալից և վճռական: Միգուցե դուք վերջին անգամ եք զառերը գլորում: Փորձեք ավելի մեծ թիվ բռնել:

ՈԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՆԱԼԻՆԵՐԸ

Որքան հաճախ ենք անկազմակերպ և ցրված գործում: Մենք կարող էինք անել այս ու այն, հնարավորությունները շատ են, բայց բոլորն էլ ինչ-որ կերպ մեզ համար նշանակալի չեն, կենսականորեն անհրաժեշտ չեն: Մեր ազատությունը բեռ է՝ ի՞նչ անել այսօր, ո՞ր գնալ: Ամենօրյա, սովորական գործողությունները օգնում են մեզ խուսափել աննպատակության զգացումից: Այնուամենայնիվ, բոլորին երբեմն տանջում է այն միտքը, որ կարող էին ավելին անել, ավելի լավ արդյունքների հասնել: Մենք ժամանակ ենք վատնում: Մեզանից յուրաքանչյուրը հայտնվում է այնպիսի իրավիճակներում, երբ անհրաժեշտ է գործել առանց հապաղելու, անմիջապես

որոշումներ կայացնել, երբ ժամանակն էական է: Ամենից հաճախ դրանք դրսից են մեզ պարտադրվում: Մենք չենք հասցնում գործը ժամանակին ավարտել, մենք մեր վրա ենք վերցնում մի գործ, որն ընդունակ չենք լուծելու, պատասխանատվություն ենք վերցնում ինչ-որ բանի կամ ինչ-որ մեկի համար: Հետադարձի ճանապարհ չկա, ուզենք թե չուզենք պետք է գլուխ հանենք, կարգավորենք դա: Զարմանալի է, բայց այսպիսի ֆորսմաժորային հանգամանքներում մենք հանկարծ ոգեշնչվում ենք, սկսում ենք իրական ապրել, հիմա այն ամենը, ինչ անում ենք, թվում է հրատապ, անհրաժեշտ:

Ամեն ինչ փոխվել է: Մենք այլևս ազատություն չունենք: Բայց վաղ թե ուշ ամեն ինչ վերադառնում է իր տեղը: Եվ երբ հրատապ կարիքի այս զգացումն անցնում է, մենք չգիտենք, թե ինչպես վերադարձնել այն, չնայած որ կցանկանայինք:

Զորավարներին այս երևույթը հայտնի է առաջին բանականների ի հայտ գալուց ի վեր. ինչպե՞ս մարտական, հարձակողական ոգի ներշնչել զինվորներին: Որոշ զորավարներ ապավինում էին իրենց պերճախոսությանը, և նրանք, ովքեր օժտված էին այս շնորհով, հասնում են հաջողության: Սակայն չինացի ստրատեգ Սուն Ցզին դեռ մ.թ.ա 4-րդ դարում եկել էր այն եզրակացության, որ միայն ելույթներով անհնար է հասնել որևէ տևական ազդեցության, որքան էլ դրանք ոգեշնչող լինեն: Փոխարենը, Սուն Ցզին խոսում էր «մահվան գոտու» մասին՝ մի վայր, որտեղ բանակը դեմ է առնում լեռանը, գետին կամ անտառին՝ չունենալով նահանջի (փախուստի) ճանապարհ: Ըստ Սուն Ցզիի, եթե բանակը նահանջելու տեղ չունի, զինվորները կռվում են կրկնակի կամ նույնիսկ եռակի ուժերով և հաղթում, մինչդեռ բաց տեղանքում նրանց անխուսափելիորեն սպսելու է մահը: Սուն Ցզին կոչ էր անում զիտակցաբար զինվորներին դնել անելանելի դրության մեջ, խենթության եզրին: Հուսահատության ազդեցության տակ նրանք կմարտնչեն սատանաների պես: Ահա թե ինչ արեց Կորտեսը Մեքսիկայում, և դա ոգեշնչման հասնելու միակ իրական միջոցն էր: Աշխարհը ղեկավարում է անհրաժեշտությունը: Մարդիկ փոխում են իրենց վարքը միայն այն դեպքում, երբ դա անխուսափելի է: Նրանք կհավատան, որ պետք է գործեն միայն այն դեպքում, եթե իրենց կյանքը կախված լինի դրանից:

«Մահվան գոտին» հոգեբանական ֆենոմեն է, և դրա ազդեցությունը դուրս է գալիս մարտական գործողությունների շրջանակից: Դա ցանկացած այն հանգամանք է, երբ զգում ես, որ դեմ ես առել պատին, և հասկանում ես, որ այլընտրանք չունես: Նահանջելու տեղ չկա, իսկ ժամանակն անխնա վազում է: Պարտությունը հոգեբանական մահի մի տեսակ է, որը նայում է քո դեմքին: Այն ստիպում է ձեզ քայլեր ձեռնարկել՝ սարսափելի հետևանքներից խուսափելու համար:

Կարևոր է հասկանալ, որ մենք բոլորս արարածներ ենք և սերտորեն կապված ենք շրջապատող աշխարհի հետ, հետևաբար, մենք բնագոյաբար արձագանքում ենք մեզ շրջապատող հանգամանքներին և մարդկանց: Եթե մեր վիճակը բարդ չէ, հանգամանքները ճնշող չեն, մարդիկ մեզ հետ բարեհամբույր են, ապա ներքին լարվածությունը թուլանում է: Մենք նույնիսկ կարող ենք ձանձրանալ և հոգնել: Մենք կորցնում ենք ապրելու խթանը, թեև միշտ չէ, որ զիտակցում ենք դա: Բայց հետո իրավիճակը դառնում է կրիտիկական՝ հոգեբանական «մահվան գոտի», և փոխվում է դինամիկան: Ձեր ամբողջ մարմինը պատասխանում է, արձագանքում է վտանգին էներգիայի պայթյունով, դուք համախմբվում եք: Անհետաձգելիության զգացումը ճնշում է ձեզ՝ գործելու կոչ անում: Չի կարելի կորցնել ժամանակը:

Խորամանկությունը կայանում է նրանում, որ սովորեք ժամանակ առ ժամանակ դիտավորյալ կիրառել այս էֆեկտը ինքներդ ձեզ վրա՝ որպես զարթուցիչի մի տեսակ:

Ահա չորս հնարք, որոնք կարող եք օգտագործել՝ ձեզ հոգեբանական «մահվան գոտի» ուղարկելու համար: Բայց միայն կարդալը և դրանց մասին մտածելը ձեզ չի օգնի: Առաջարկությունները պետք է կյանքի կոչվեն: Սրանք ինքներդ ձեր վրա ճնշում գործադրելու տարբեր ձևեր են: Կախված նրանից, թե արդյոք ցանկանում եք ամենօրյա օգտագործման համար ձեզ փոքր ցնցում պատճառել, թե ուժեղ, կարող եք պտտել կարգավորիչի կոճակը: Կշեռքը ձեր ձեռքերում է:

Ամեն ինչ դրեք մեկ խաղաքարտի վրա: Նապոլեոնն ասում էր. «մահը ոչինչ է, բայց պարտված ապրել նշանակում է ամեն օր մեռնել»:

Գործեք չսպասելով լիակատար պատրաստականությանը: Մ.թ.ա. 49 թվականին, հռոմեական սենատորները Գնեոս Պոմպեոսի գլխավորությամբ, որոնք վախեցած էին Հուլիոս Կեսարի աճող իշխանությունից, հրամայեցին նրան ցրել բանակը: Հակառակ դեպքում Կեսարին սպառնում էր հռչակվել հանրապետության դավաճան: Կեսարը ստացավ այս հրամանը, երբ գտնվում էր Հարավային Գալիայում (նախանգ ներկայիս Ֆրանսիայի տարածքում) ընդամենը հինգ հազար զինվորներից բաղկացած ջոկատով: Նրա մնացած լեգեոնները բավականին հեռու էին: Զորավարը նույնիսկ մտադրված չէր հնազանդվել և կատարել հրամանը՝ դա հավասարագոր էր ինքնասպանության, բայց հիմնական լեգեոններին վերամիավորվելու համար անհրաժեշտ էր մի քանի շաբաթ: Չցանկանալով սպասել՝ Կեսարը սպաներին հայտարարեց. «Վիճակը գցված է» և հինգ հազար զինվորների հետ միասին անցավ Ռուբիկոն գետը, որով անցնում էր Գալիայի և Իտալիայի սահմանը: Իտալական հողեր ներխուժումը նշանակում էր պատերազմ Հռոմի դեմ: Հիմա հետդարձի ճանապարհ չկար՝ հաղթանակ կամ մահ: Կեսարին անհրաժեշտ էր բռնկել մեջ հավաքել բոլոր ուժերը, խնայել յուրաքանչյուր զինվորի, գործել արագ և հնարամիտ: Իր ձեռքը վերցնելով նախաձեռնությունը՝ նա շարժվեց դեպի Հռոմ: Կեսարի վճռական գործողությունները վախեցրին սենատորներին, և նրանք համոզեցին Պոմպեոսին փախչել:

Մենք հաճախ շատ երկար ենք սպասում, անվճռականությամբ դանդաղում ենք: Միննույն ժամանակ, երբեմն շատ կարևոր է սկսել գործել՝ չսպասելով այն զգացողությանը, որ լիովին պատրաստ եք: Դուք պետք է հաղթահարեք իրադարձությունները և անցեք Ռուբիկոնը: Դուք ոչ միայն անակնկալի կբերեք թշնամուն, այլև կկարողանաք առավելագույն օգուտ քաղել ձեր սեփական ռեսուրսներից: Հանգամանքների ճնշման տակ ձեր ստեղծագործական ուժերը կեռապատկվեն: Դա արեք բավական հաճախ, և ժամանակի ընթացքում դուք կգարգացնեք մտածելու և գործելու առանց հապաղելու կարողությունը:

Մտեք նոր ջրեր: Երբ վտանգն ամենամեծն է, նրանք, ովքեր ամբողջ կյանքում մեծ դժվարությամբ են շարժվել դեպի վեր, հազվադեպ են կոտրում ոտքերը: Դա տեղի է ունենում շատ ավելի հաճախ, երբ մարդը սկսում է հեշտությամբ վերաբերվել կյանքին և ընտրում է հեշտ ուղիներ:

Մնացեք անդադրում և անհագ: Նապոլեոնն ուներ ոչ թե մեկ, այլ բազմաթիվ եզակի առաքիություններ, որոնք նրան դարձրեցին մեծություն, գուցե նույնիսկ բոլոր ժամանակների և ժողովուրդների մեծագույն հրամանատարի: Այս արժանիքների շարքում, որոնք թույլ տվեցին նրան հասնել բարձունքների և պահպանել դրանք, նրա

անսպառ էներգիան էր: Ռազմական գործողությունների ժամանակ նա աշխատում էր տասնութ ժամ անընդմեջ, իսկ անհրաժեշտության դեպքում կարող էր մի քանի օր արթուն մնալ: Ընդ որում, նա չէր տառապում անքնությամբ և աշխատունակությունը չէր նվազում: Նա կարող էր աշխատել լոգանք ընդունելով, թատրոնի ներկայացման կամ ընթրիքի ժամանակ: Բաց չթողնելով մարտադաշտերում տեղի ունեցող ոչ մի մանրուք՝ նա կարողանում էր ձիով շատ մղոններ անցնել՝ առանց հոգնածություն զգալու կամ տրտնջալու:

Հասկանալի է, Նապոլեոնը, բնականից օժտված էր արտասովոր տոկունությամբ, բայց նա ուներ ավելին, քան պարզապես բնական որակը: Նա ոչ մի դեպքում թույլ չէր տալիս իրեն անգործ մնալ, երբեք գոհ չէր իրենից: 1796 թվականին, դառնալով բանակի հրամանատար, նա առաջնորդեց ֆրանսիացիներին Իտալիայում շքեղ հաղթանակի, այնուհետև, գրեթե առանց ընդհատումների, գլխավորեց հաջորդ արշավը՝ այս անգամ դեպի Եգիպտոս: Այնտեղ, դժգոհ լինելով պատերազմի ընթացքից և քաղաքական ուժի բացակայությունից, որը միանշանակ խանգարում էր իրեն ռազմական գործերում, նա վերադարձավ Ֆրանսիա և պետական հեղաշրջման միջոցով հասավ իրեն որպես առաջին հյուպատոս հռչակելուն: Այստեղ էլ կանգ չառնելով՝ նա անմիջապես սկսեց երկրորդ իտալական արշավը: Եվ հետո շարունակեց ամեն ինչ նույն ուղիով՝ ներգրավվելով նորանոր պատերազմների և մարտերի մեջ, նորանոր խնդիրներ դնելով և լուծելով, ինչը ստիպեց նրան կրկին ու կրկին դիմել իր անսպառ էներգիային: Եթե ինչ-որ պահի նա կանգ առներ, դա, հավանաբար, կսպաներ նրան:

Երբեմն մենք հոգնածություն ենք զգում ոչ թե այն պատճառով, որ իսկապես հոգնած ենք, այլ այն պատճառով, որ ձանձրանում ենք: Չունենալով իսկապես լուրջ խնդիրներ, որոնք պետք է լուծվեն, մենք ընկղմվում ենք մտավոր և հուզական, լեթարգիական, քնի մեջ: «Երբեմն մահը գալիս է պարզապես էներգիայի պակասից», - մի անգամ ասաց Նապոլեոնը, և էներգիայի պակասը բացատրվում է նրանով, որ մենք մարտահրավեր չենք նետում, մենք արժանի խնդիր չենք դնում, երբ ուժ գործադրելու տեղ չունենք:

Ռիսկի դիմեք, և ձեր մարմինն ու միտքը կպատասխանեն էներգիայի ալիքով: Մի վախեցեք ռիսկից, դարձրեք այն մշտական պրակտիկա: Թույլ մի տվեք ձեզ բավարարվել այն ամենով, ինչին հասել եք: Շատ շուտով «մահվան գոտում» լինելը ձեզ համար մի տեսակ կարիք կդառնա, դուք պարզապես չեք կարողանա առանց դրա ապրել: Երբ զինվորները դուրս են գալիս կյանքին սպառնացող իրավիճակից, նրանք հաճախ զգում են ոչ թե հոգնածություն, այլ ուրախ հուզմունք և նույն փորձառությունը կրկին զգալու ցանկություն:

Կյանքն ավելի արժեքավոր և իմաստալից է դառնում, երբ կանգնած ենք «մահվան առջև»: Շարունակեք ռիսկի դիմել, քանի որ ռիսկային և դժվարին առաջադրանքները, որոնք դուք լուծում եք, մարտահրավերները, որոնց պատասխանում եք, այս ամենը կարելի է նմանեցնել խորհրդանշական մահվան, քանզի այն խորացնում է կյանքի արժեքի մասին ձեր գիտակցումը:

ՀԵՂԻՆԱԿԱՎՈՐ ԿԱՐԾԻՔ

Երբ արագ նետվելով մարտի, գոյատևում եք, և ոչ թե արագ նետվելով զոհվում՝ դա մահվան գոտին է... Նետեք ձեր զինվորներին մի տեղ, որտեղից ելք չկա, և այդ ժամանակ նրանք կզոհվեն, բայց չեն փախչի:

Իսկ եթե նրանք պատրաստ լինեն մահվան, ինչպե՞ս չհաղթել:

Եվ այս դրությունում գտնվող մարտիկներն ու այլ մարդիկ լարում են իրենց բոլոր ուժերը: Երբ զինվորները մահացու վտանգի են ենթարկվում, նրանք ոչնչից չեն վախենում: Երբ նրանք ելք չունեն, ամուր են մնում: Երբ նրանք մտնում են թշնամու երկրի խորքը, նրանց ոչինչ չի պահում: Երբ ոչինչ անել հնարավոր չէ, նրանք կռվում են:

Սուն Յզի (մ. թ. ա. 4-րդ դար)

ՀԱԿԱՌԱԿ ԿՈՂՄԸ

Գիտակցելով, որ կորցնելու ոչինչ չունեք, կարող է ստիպել ձեզ առաջ շարժվել դեպի թշնամին: Սակայն, այս զգացողությունը կարող է նմանատիպ էֆեկտ առաջացնել նաև ուրիշների մոտ: Երբեք կոնֆլիկտի մեջ մի մտեք անկյուն մղված մարդկանց հետ: Միգուցե նրանք ապրում են անտանելի պայմաններում կամ այս կամ այն պատճառով հակված են ինքնասպանության մտքերին: Ինչ էլ որ լինի, նրանք այլևս հույս չունեն, իսկ մարդիկ, ովքեր հույս չունեն, ունակ են խենթության: Կարելի է ասել, որ նման իրավիճակում առավելությունն իրենց կողմն է: Նրանք այնպիսի կյանքի պայմաններում են գտնվում, որ կորցնելու ոչինչ չունեն, իսկ դուք կորցնելու բան ունեք: Մի խանգարեք նրանց:

Այլ բան է, եթե ձեր հակառակորդների մոտ թուլացել է մարտական ոգին, դա ձեզ առավելություն կտա: Միգուցե նրանք հասկանում են, որ պայքարում են տխրահոյակ անարդար գործի համար կամ չեն հարգում իրենց առաջնորդին: Ցածր մարտական ոգի ունեցող բանակը կարող է փախչել առանց մեծ դժվարության: Ուժի ցուցադրումը վերջնականապես կխաթարի նրանց ռազմատենչ տրամադրվածությունը:

Հաստատապես համոզվեք, որ հակառակորդի մոտ չի առաջանում հրատապության զգացում, իրադարձությունների ակտուալություն:

Թող հակառակորդները մտածեն, որ իրենց տրամադրության տակ է ժամանակի անհունությունը: Եվ երբ հանկարծ հայտնվեք նրանց սահմաններին, նրանք կերերան, կշփոթվեն, և ձեզ համար դժվար չի լինի գերիշխանություն ձեռք բերել: Խանդավառեք ձեր մարտական ոգին և փորձեք հնարավորինս մարել այն ձեր հակառակորդների մեջ:

Սկիզբը.

- 1) https://www.datocms-assets.com/63284/1732378406-first-strategy_arm.pdf
- 2) https://www.datocms-assets.com/63284/1735414231-last-wars_arm.pdf
- 3) https://www.datocms-assets.com/63284/1740855330-keep-ur-head_arm.pdf

Աղբյուրը. <https://www.litres.ru/book/robert-grin/33-strategii-voyny-624835/chi>